

ՏԱՐԲԵՐԱԿ 1

1. Խ. Աբովյանը ծնվել է _____ թվականին _____ գյուղում: 0.5մ

2. Ո՞ր ամսագրին է թղթակցում Մ. Նալբանդյանը: 0.25մ
 ա) Հյուսիսսափայլ գ) Գրական թերթ
 բ) Մշակ դ) Մեղու

3. Նշված ստեղծագործություններից ո՞րն է կատակերգություն: 0.25մ
 ա) «Վերք Հայաստանի» գ) «Պեպո»
 բ) «Խենթը» դ) «Լճակ»

4. Դուրս գրել Խ. Աբովյանի ստեղծագործությունները: 0.5մ
 «Վերք Հայաստանի», «Սասունցի Դավիթ», «Պարապ վախտի խաղալիքը», «Նախաշավիղ կրթության», «Առավոտ լուսո», «Պեպո», «Տաղ Վարդավառին», «Պատմություն Տիգրանի», «Խենթը», «Թուրքի աղջիկը»:

5. Նշվածներից ո՞ր հարցը չի արծածվել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում: 0.5մ
 ա) աշխարհաբար լեզվի գ) գրականության աշխարհիկ բովանդակության
 բ) գրական հերոսի ընտրության դ) անցյալի դասական գրողներին հետևելու

6. Գրել, թե որ պնդումներն են ճիշտ(նշել միայն համարները): 2մ
 ա) Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը որոշ փոփոխություններով դարձել է Հայաստանի երրորդ հանրապետության հիմնը:
 բ) «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը» հայ նոր գրականության ծրագիր է:
 գ) Ե. Չարենցի «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» երկի հերոսը Մ. Նալբանդյանն է:
 դ) Գրաբարը գործածական է եղել մինչև 11-րդ դար, հետո մնացել է միայն որպես գրքի լեզու:
 ե) «Գամառ Քաթիպա» գրական խմբակցությունը հիմնադրել է Մ. Նալբանդյանը:

7. Ո՞ր պնդումն է սխալ: 2մ
 ա) Ստեղծագործության դիպաշարի (սյուժե) բաղկացուցիչ մասերն են նախադրություն, հանգույց, կոնֆլիկտ, բարձրակետ և հանգուցալուծում:
 բ) Վեպը վիպակից, պատմվածքից և նորավեպից տարբերվում է նրանով, որ ունի կյանքի լայն ընդգրկում, մեծ ծավալ, բազմաթիվ հերոսներ:
 գ) Վեպերը լինում են միայն պատմական:
 դ) Կատակերգությունը դրամատիկական ժանրի ստեղծագործություն է:
 ե) Դիմառնությունը գեղարվեստական այն հնարքն է, երբ անշունչ առարկաները դեմք են ստանում և անձնավորվում:

8. Ձախ կողմում ստեղծագործությունների վերնագրերն են, աջում՝ հատվածներ նրանցից: 2մ
Համապատասխանեցնել դրանք:
 ա) «Օրորոցի երգը» 1) Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրետսի նման:
 բ) «Վերք Հայաստանի» 2) Թո՛ղ որսը՞ղ, արի՛, քաջասի՛ ըտ բազե, Քու՛ երգը գուցե իմ որդի՛ն կուզե...
 գ) «Իտալացի աղջկա երգը» 3) - Արա՛ քս, ինչո՞ւ ձըկանց հետ Պար չես բռնում մանկական...
 դ) «Արաքսի արտասուքը» 4) Չէ՛... թշվառ չե՛ Իտալիան, Եթե կանայք այսպես են:

9. Ո՞ր կերպարը չի ստեղծել Մ. Նալբանդյանը:

- ա) ազատության համար մարտնչող մարտիկ
- բ) եղբորը պայքարի կոչող իտալուհի
- գ) հայրենիքի ազատության համար կռվելու պատրաստ պատանի
- դ) բազեի երգով իր որդուն օրորող մայր

0.5մ

10. Ո՞ր ստեղծագործության մեջ է օգտագործվել անձնավորումը:

- ա) Մ. Նալբանդյան «Ազատություն»
- բ) Լ. Աբովյան «Վերք Հայաստանի»
- գ) Ռ. Պատկանյան «Արաքսի արտասուքը»
- դ) Ն. Շնորհալի «Առավոտ լուստ»

0.5մ

11. Շարունակել քառատողը:

Ահա՛, եղբա՛յր, քեզ մի դրոշ,

0.5մ

12. Արտահայտչական-պատկերավորման ո՞ր միջոցն է օգտագործված տրված հատվածում:

Ներկա օրերում այլ ինչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին:

Պատասխան՝ _____:

0.5մ

13. * Ներկայացնել Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը (3-4 նախադասություն) :

1մ

ՏԱՐԲԵՐԱԿ 2

1. Մ. Նալբանդյանը ծնվել է _____ թվականին _____ քաղաքում: 0.5մ
2. Ո՞ր շրջառությունն է վերաբերում Մ. Նալբանդյանին:
ա)Սև ցեղերի սերմնացան գ)Ազատություն երգիչ
բ)Սկյուտարի սոխակ դ)Անմահ լռեցի 0.25մ
3. Նշվածներից ո՞րն է վեպ:
ա)<<Արաքսի արտասուքը>> գ)<<Վերք Հայաստանի>>
բ)<<Պեպո>> դ)<<Հայոց պատմություն>> 0.25մ
4. Դուրս գրել Ռ.Պատկանյանի ստեղծագործությունները:
<<Արաքսի արտասուքը>>, <<Չախու>>, <<Ազատություն>>,<<Օրորոցի երգ>>, <<Լճակ>>, <<Ազատ երգեր>>,
<<Մշեցու հեկեկանքը>>, <<Սպիտակ ձին>>, <<Վերք Հայաստանի >>, <<Արագածին >>: 0.5մ
5. Ի՞նչ իրադարձություններ են պատկերված <<Վերք Հայաստանի >>վեպում:
ա)1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը
բ)1826-1827թթ. ռուս-պարսկական պատերազմը
գ)387թ. Հայաստանի բաժանումը
դ)Շահ-Աբասի արշավանքը 0.5մ
6. Գրել, թե որ պնդումներն են ճիշտ(նշել միայն համարները):
ա)Մ. Նալբանդյանի <<Ազատություն>> բանաստեղծությունը տպագրվել է,հետո արգելվել իր
ազատասիրական գաղափարների համար:
բ) <<Վերք Հայաստանի>> վեպի <<Հառաջաբանը>> սկսվում է Կրետոսի և նրա որդու մասին պատմող
դրվագով:
գ) Ե. Չարենցի <<Դեպի լյառը Մասիս>> պոեմը Խ. Աբովյանի վերջին գիշերվա պատմությունն է:
դ) 11-րդ դարից սկսած գործածակն է դառնում միջին հայերենը:
ե) Ռ. Պատկանյանը <<Հյուսիսափայլ>> ամսագրում է տպագրել <<Արաքսի արտասուքը>>
բանաստեղծությունը: 2 մ
7. Ո՞ր պնդումն է սխալ:
ա)Վեպերը լինում են արձակ և չափածո, լինում են նաև արկածային, երգիծական, գիտաֆանտաստիկ,
պատմական վեպեր:
բ)Քնարական բանաստեղծությունը գրվում է հեղինակի անունից, առաջին դեմքով, բայց արտահայտում է
բոլորին հուզող մտքեր և զգացումներ:
գ)Փոխադրությունը բառացի թարգմանություն է առանց որևէ փոփոխության:
դ)Գազաթնակետը դիպաշարի բաղկացուցիչ մաս է. այն հակադիր ուժերի միջև լարված բախումների
բարձրակետն է:
ե)Ողբերգությունը դրամատիկական ստեղծագործություն է: 2 մ

**8. Ձախ կողմում ստեղծագործությունների վերնագրերն են, աջում՝ հատվածներ նրանցից:
Համապատասխանեցնել դրանք:**

- | | |
|-------------------------|---|
| ա) <<Օրորոցի երգը >> | 1) Տասը լեզու սովորեցեք, բայց ձեր հավատը դայիմ բռնեցեք: |
| բ) <<Վերք Հայաստանի>> | 2) Բազեն որ եկավ՝ որդիս լրոեցավ,
Ռազմի երգերի ձայնով քնեցավ: |
| գ) <<Արաքսի արտասուքը>> | 3) Ի՞նչ է ասում այս գիրքը և ի՞նչ է բարբառում.
Զուր չէ՞ արդյոք վատնել անհատների իր ձիրքը: |
| դ) <<Դեպի լյառը Մասիս>> | 4) Որի՞ համար զարդարվիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ... |

1 մ

9. Ո՞ւմ անունը չի հիշատակում Խ. Աբովյանը <<Վերք Հայաստանի>> վեպի <<Հառաջաբանում>>:

- ա) քանաքեռցի <<ջիվան>> Ադասի
- բ) <<մանկական սիրելի բարեկամ>> Ադաֆոն Սմբատյան
- գ) Իտալիայի ազատության համար մարտնչող երիտասարդ
- դ) հայ ժողովրդի նախնիներ Հայկ, Վարդան, Տրդատ

0.5 մ

10. Ո՞ր ստեղծագործության մեջ է օգտագործվել դիմառնությունը:

- | | |
|---|-----------------------------------|
| ա) Ռ. Պատկանյան <<Արաքսի արտասուքը>> | գ) Գ. Նարեկացի <<Ծննդյան մեղեդի>> |
| բ) Մ. Նալբանդյան <<Իտալացի աղջկա երգը>> | դ) Խ. Աբովյան <<Վերք Հայաստանի>> |

0.5 մ

11. Շարունակել քառատողը:

Արի՛, ի՛մ սոխակ, թո՛ղ պարտեզ մերին,

0.5 մ

12. Արտահայտչական-պատկերավորման ո՞ր միջոցն է օգտագործել տրված հատվածում:

Քանի որ իմ զավակունք	Ինձ միշտ սրգվոր կը տեսնեք,-
Այսպես կու մընան պանդուխտ՝	Այս է անխաբ իմ սուրբ ուխտ:

Պատասխան՝ _____:

0.5 մ

13. * Ներկայացնել Ռ. Պատկանյանի <<Արաքսի արտասուքը>> բանաստեղծությունը (3-4 նախադասություն):

1 մ

Տարբերակ 3

1. Ռ. Պատկանյանը ծնվել է _____ թվականին _____ քաղաքում: 0.5մ
2. Ո՞ր շրջասությունն է վերաբերում Խ. Աբովյանին: 0.25մ
 ա) նորավեպի իշխան գ) անմահ քանաքեռցի
 բ) Կամիշինի վսեմ քաղաքացի դ) Սկյուտառի սոխակ
3. Նշվածներից ո՞րն է պոեմ: 0.25մ
 ա) <<Արաքսի արտասուքը>> գ) <<Պեպո>>
 բ) <<Լճակ>> դ) <<Դեպի լյառը Մասիս>>
4. Դուրս գրել Մ. Նալբանդյանի ստեղծագործությունները: 0.5մ
 <<Լճակ>>, <<Օրորոցի Երգ>>, <<Ազատություն>>, <<Միրել>>, <<Կոմս Էմանուելի հիշատակարանը>>, <<Արաքսի արտասուքը>>, <<Վերք Հայաստանի>>, <<Իտալացի աղջկա երգը>>, <<Մանկության օրեր>>, <<Ապոլլոնին>>:
5. Նշված հարցադրումներից ո՞րը չկա Խ. Աբովյանի <<Վերք Հայաստանի>> վեպի <<Հառաջաբանում>>: 0.5մ
 ա) Նկարագրել ժողովրդի կյանքն ու նվիրական զգացմունքները՝ սերը, բարեկամությունը, ծնողասիրությունը:
 բ) Ներկայացնել կրոնի երկրորդական դերը հայ ժողովրդի գոյության հարցում:
 գ) Կենդանություն տալ անձնագոհ հայորդիների գործերին:
 դ) Արթնացնել հայոց ազգային արժանապատվության զգացումը:
6. Գրել, թե որ պնդումներն են ճիշտ(նշել միայն համարները): 2մ
 ա) Մ. Նալբանդյանի <<Իտալացի աղջկա երգը>> բանաստեղծության քնարական հերոսուհին եղբորը կովի է կոչում հանուն Իտալիայի ազատագրման:
 բ) <<Հառաջաբանում>> Խաչատուր Աբովյանի կարծիքով գրաբարը մշակված և հարուստ լեզու է, բայց անհասկանալի, իսկ աշխարհաբարը՝ անմշակ, բայց հասկանալի:
 գ) Ե. Չարենցի <<Դեպի լյառը Մասիս>> պոեմում Խ. Աբովյանը վերհիշում է իր անցած ուղին մեկ գիշերվա ընթացքում:
 դ) Մինչ Աբովյանը աշխարհաբարը մտել է գրական շրջանառության մեջ, բայց Աբովյանն է համարվում աշխարհաբարի հիմնադիրը:
 ե) <<Վերք Հայաստանի>> վեպը լույս է տեսնում Խ. Աբովյանի կենդանության օրոք:
7. Ո՞ր պնդումն է սխալ: 2մ
 ա) Անձնավորումը պատկերավորման միջոց է, որի դեպքում անշունչ առարկաներին, երևույթներին և կենդանիներին վերագրվում են մարդկային հատկանիշներ:
 բ) Վեպերը լինում են միայն արձակ:
 գ) Դիպաշարը (սյուժեն) ստեղծագործության մեջ նկարագրվող դեպքերն ու իրադարձություններն են:
 դ) Անձնավորումը իմաստով մոտ է այլաբանությունը. այլաբանությունը ամենից շատ գործածվում է առակներում, հեքիաթներում:
 ե) Ողբերգությունը և կատակերգությունը տարբերվում են վեպից ոչ միայն սեռով, այլև արտաքին տեսքով:

8. Ձախ կողմում ստեղծագործությունների վերնագրերն են, աջում՝ հատվածներ նրանցից:

Համապատասխանեցնել դրանք:

ա) <<Ազատություն>>

1) Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սեզ, հըպարտ աչերից...

բ) <<Իտալացի աղջկա երգը>>

2) Գնա՛, եղբայր, Աստված քեզ հույս,
Ազգի սերը քաջալեր...

գ) <<Օրորոցի երգը>>

3) Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կըսպասե...

դ) <<Արաքսի արտասուքը>>

4) Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզե արեղա դառնալ:

1մ

9. Ո՞ր կերպարը չի ստեղծել Ռ. Պատկանյանը:

ա) հայ ժողովրդին մարմնավորող Արաքսը

բ) բազեի երգով իր որդուն օրորող մայրը

գ) անձնական վիշտը լճակին պատմող պատանի

դ) Արաքսի հետ զրուցող <<Խիզախ, անմիտ>> պատանի

0.5մ

10. Նշվածներից ո՞րն է փոխադրություն:

ա) Մ. Նալբանդյան <<Իտալացի աղջկա երգը>>

գ) Ն. Շնորհալի <<Առավոտ լուսո>>

բ) Խ. Աբովյան <<Վերք Հայաստանի>>

դ) Ռ. Պատկանյան <<Արաքսի արտասուքը>>

0.5մ

11. Շարունակել քառատողը:

Ամենայն տեղ մահը մի է

0.5մ

12. Արտահայտչական-պատկերվորման ո՞ր միջոցն է օգտագործված տրված հատվածում:

Մանկության օրեր, երազի նման

Անցաք գնացիք, այլ չեք դառնալու:

Պատասխան՝ _____:

0.5մ

13. * Ներկայացնել Ռ. Պատկանյանի <<Օրորոցի երգը>> բանաստեղծությունը (3-4 նախադասություն):

1 մ

Տարբերակ 4

1. **Նշվածներից ովքե՞ր են ծնվել Նոր Նախիջևանում:**

ա) Խ. Աբովյան և Մ. Նալբանդյան	զ) Մ. Նալբանդյան և Ռ. Պատկանյան
բ) Խ. Աբովյան և Ռ. Պատկանյան	դ) Սայաթ-Նովա և Նահապետ Քուչակ

0.5մ
2. **Ո՞ր շրջասությունը չի վերաբերում Խ. Աբովյանին:**

ա) Հայաստանի վերքի երգիչ	զ) Նաիրյան երկրի երգիչ
բ) Անմահ քանաքեռցի	դ) Հայ նոր գրականության հիմնադիր

0.25մ
3. **Նշված ստեղծագործություններից ո՞րը բանաստեղծություն չէ:**

ա) «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»	զ) «Լճակ»	դ) «Ազատություն»
բ) «Արաքսի արտասուքը»		

0.25մ
4. **Դուրս գրել Խ. Աբովյանի ստեղծագործությունները:**

«Վերք Հայաստանի», «Արաքսի արտասուքը», «Օրորոցի երգ», «Թուրքի աղջիկը», «Իտալացի աղջկա երգը», «Տաղարան», «Պատմություն Տիգրանի», «Պարսպ վախտի խաղալիքը», «Առաջին սեր», «Ազատություն»:

0.5մ
5. **Ըստ Խ. Աբովյանի՝ ինչու՞ հայ երեխաներին չէր գրավում հայ գրականությունը:**

ա) Դպրոցը բավարար կրթություն չի տալիս գրաբարով գրված ստեղծագործությունները կարդալու ու հասկանալու համար:

բ) Հայ իրականության մեջ չկան հետաքրքիր իրողություններ, որ չկա գրավիչ դիպաշարի (սյուժեի) հիմք դառնան:

զ) Հայ գրականության մեջ չկան հետաքրքիր ստեղծագործություններ:

դ) Հայերի մեջ չկան այնպիսի գրողներ, որ կարողանան բարձրակարգ վեպեր գրել:

0.5մ
6. **Գրել, թե որ պնդումներն են ճիշտ(նշել միայն համարները):**

ա) Մ. Նալբանդյանը «Ազատություն» բանաստեղծության մեջ մանկան տեսքով մարմնավորել է ազատության գաղափարը:

բ) «Հռոմեացիները» կերտվում է նաև հայրենասեր Աբովյանի կերպարը, որը մտահոգ է հայ երեխայի կրթության և հայ գրականության զարգացման հարցերով:

զ) «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» չափածո նովելում Ե. Չարենցը տեսիլքի մեջ տեսնում է ամրոցի կալանավորներին և Մ. Նալբանդյանին:

դ) Աբովյանը գրեց ժողովրդին հասկանալի աշխարհաբարով՝ հիմք ընդունելով Արարատյան բարբառը:

ե) Ռ. Պատկանյանը գրել է միայն բանաստեղծություններ. ոչ մի վիպակ չի գրել:

2 մ
7. **Ո՞ր պնդումն է սխալ:**

ա) Վեպը մեկ հեղինակի ստեղծագործություն է. իսկ դյուցազներգության հեղինակը ժողովուրդն է:

բ) Փոխադրությունը ոչ բառացի թարգմանություն է, հեղինակը այլալեզու բնագրից կարող է կրճատել հատվածները, ավելացնել նորը, կատարել փոփոխություններ՝ դրանք հարմարեցնելով իր գաղափարական նպատակադրմանը:

զ) Անձնավորումը պատկերավորման միջոց է. մարդկային հատկանիշներ ստանում են միայն անշունչ առարկաները:

դ) Դիպաշարի(սյուժե) բաղկացուցիչ մաս է նախադրությունը. դա այն միջավայրն է, որտեղ պետք է տեղի ունենան գործողությունները:

ե) Կատակերգությունը և ողբերգությունը՝ որպես գրական ժանրեր, առաջացել են Հայաստանում:

2 մ

8. Ձախ կողմում են ստեղծագործությունների անունները, իսկ աջ կողմում՝ հատվածներ նրանցից:

Համապատասխանեցնել դրանք:

ա) <<Օրորոցի երգ>>

1. Ամենայն տեղ մահը մի է,

Մարդ մի անգապ պիտ մեռնի...

2. Թո՛ղ որսդ, արի՛, քաջասի՛րս բազե,

բ) <<Իտալացի աղջկա երգը>>

Քու երգը գուցե իմ որդին կուզե...

3. Արաքս, ինչու՞ ձրկանց հետ

գ) <<Ազատություն>>

Պար չես բռնում մանկական...

4. Ազատությա՞ն դու զինվոր

դ) <<Արաքսի արտասուքը>>

Կամիս գրվել այս օրից...

1 մ

9. Ո՞ր կերպարը չի ստեղծել Մ. Նալբանդյանը:

ա) Պետրոպավլովյան ամրոցի կալանավոր

բ) Հայրենիքի համար կռվելու պատրաստ քաջ պատանի

գ) Արաքսի ափերով քայլող քայլամուրթ պատանի

դ) Ազատության զինվորին նախազգուշացնող ճակատագիր

0.5մ

10. Ո՞ր կերպարը չի ստեղծել Մ. Նալբանդյանը:

ա) Պետրոպավլովյան ամրոցի կալանավոր

բ) հայրենիքի համար կռվելու պատրաստ քաջ պատանի

գ) Արաքսի ափերով քայլող քայլամուրթ պատանի

դ) ազատության զինվորին նախազգուշացնող ճակատագիր:

0.5մ

11. Շարունակի՛ր քառատողը:

Ազատ Աստվածն այն օրից

0.5մ

12. Արտահայտչական-պատկերավորման ո՞ր միջոցն է օգտագործված տրված հատվածում:

Միրտն անապակ՝ ինչպես վտակ,
Անմեղ՝ ինչպես սյուք դալկահար,

Հավատարիմ՝ ինչպես քնար
Հրաժեշտ տվավ կյանքի մենակ:

Պատասխան՝ _____:

0.5մ

13. * Ներկայացնել Մ. Նալբանդյանի <<Իտալացի աղջկա երգը>>բանաստեղծությունը (3-4 նախադասություն):

1 մ